

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 13: 1-9

Այդ ատեն ներկայ եղողներէն ոմանք պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս խառնեց իրենց զոհերուն հետ: Յիսուս պատասխանեց անոնց. «Կը կարծէ՞ք թէ այդ Գալիլեացիները աւելի մեղաւոր էին բոլոր Գալիլեացիներէն, քանի որ այսպիսի չարչարանքներ կրեցին: Կըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ թէ այն տասնութ հոգիները, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ սպաննեց զանոնք, կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմ բնակող բոլոր մարդոցմ աւելի յանցաւոր էին: Կըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նմանապէս պիտի կորսուիք»:

Սա՛ առակն ալ ըսաւ. «Մէկը իր այգիին մէջ ունէր տնկուած թզենի մը. եկաւ պտուղ փնտռելու անոր վրայ, բայց չգտաւ: Ուստի ըսաւ այգեպանին. «Ահա՛ երեք տարի է, որ կու գամ պտուղ կը փնտռեմ այդ թզենիին վրայ, ու չեմ գտներ. ա՛լ կտրէ՛ գայն, ինչո՞ւ խափանէ գետինը»: Ան ալ պատասխանեց անոր. «Տէ՛ր, ա՛յս տարի ալ ձգէ գայն, մինչեւ որ բրեմ անոր շուրջը ու թրիք դնեմ: Եթէ պտուղ տայ՝ լա՛ւ. այլապէս՝ յետագայի՛ն կտրէ գայն»»:

Luke 13:1-9

About this time Jesus was informed that Pilate had murdered some people from Galilee as they were offering sacrifices at the Temple. “Do you think those Galileans were worse sinners than all the other people from Galilee?” Jesus asked. “Is that why they suffered? Not at all! And you will perish, too, unless you repent of your sins and turn to God. And what about the eighteen people who died when the tower in Siloam fell on them? Were they the worst sinners in Jerusalem? No, and I tell you again that unless you repent, you will perish, too.”

Then Jesus told this story: “A man planted a fig tree in his garden and came again and again to see if there was any fruit on it, but he was always disappointed. Finally, he said to his gardener, ‘I’ve waited three years, and there hasn’t been a single fig! Cut it down. It’s just taking up space in the garden. “The gardener answered, ‘Sir, give it one more chance. Leave it another year, and I’ll give it special attention and plenty of fertilizer. If we get figs next year, fine. If not, then you can cut it down.’”

Շահավետ եւ օգտակար

Արդ, ով ցանկանում է տեսչում է անանց կյանքը եւ անվախճան փառքը, թող այս կյանքում ուրանա անցավոր փառքը: Ով ցանկանում է դրախտի հեշտությունը, թող այստեղ չզվարճանա մարմնով:

Ով կամենում է ապրել հրեշտակների հետ, թող այստեղ չնստի հրապարակներում: Ով սրտով սիրում է Տեր Հիսուսին, թող այստեղ Նրա հետ անբաժան լինի անարատ սրբությամբ: Ով շտապում է մտնել լույսի առագաստը, թող այստեղից իր հետ վերցնի ողորմության յուղը: Ով երկնչում է անվախճան որդերից, թող այստեղ լեզվով չկծոտի իր եղբորը: Ով զարհուրում է բորբոքված հրից, թող այստեղ իր մեջ հանգցնի նախանձի բոցը: Ով վախենում է արտաքին խավարից, թող այստեղ չշրջի մեղքերի խավարի մեջ: Ով վախենում է աչքերի լացից եւ ատամների կրճտումից դժոխքում, թող այստեղ իր աչքերից չցամաքեցնի ապաշխարության արցունքների վտակը: Ով սարսափում է անտանելի տանջանքներից, այստեղ գիշեր ու զօր թող արտասովի անդադար:



3: List of the Feasts celebrated in the Armenian church

Ով դողում է սաստիկ պատուհասից, թող այստեղ շարունակ հանդուգն չլինի: Ով կամենում է երկար ճանապարհ գնալ, թող այստեղ իսկ ճանապարհի պաշար պատրաստի: Ով կամենում է անդատ եւ անդատապարտ մնալ դառն ու ահեղ դատաստանում, թող այստեղ չդատապարտի իր եղբորը: Ով իր Տիրոջը պարտք է բյուրավոր քանքարներ, թող այստեղ իր նմանին շնորհի հիսունն ու հարյուրը: Ով կամենում է Երկինք անցնել չար դեւերի միջով, թող իր Տիրոջից օգնություն խնդրի հենց այստեղ: Ով ցանկանում է անանց պսակը, թող այստեղ համբերի ամենայն վրշտի ու նեղության: Ով կամենում է ազատվել բոցածավալ ծովից, թող իր աչքերից արցունքներ հեղի այստեղ: Ով կամենում է անվնաս անցնել հրեղեն գետը, թող այստեղ ավելացնի իր ողորմությունը: Ով ցանկանում է մտնել անվրեպ վայելչության մեջ, թող այստեղ չզլանա այցելել հիվանդին: Ով հոժարում է լսել երանավետ ձայնը, որ ասում է. «Ազնիվ, բարի եւ հավատարի՛մ ծառա» (Մատթ. 25:21-23), թող այստեղ չփակի իր ականջները ողորմություն խնդրողների հանդեպ: Ով ախորժում է ժառանգել այն, ինչը «ո՛չ աչքը տեսավ, եւ ո՛չ ականջը լսեց» (Ա Կորնթ. 2:9), թող այստեղ դեզերի անդադար թախանձանքով: Ով կամենում է ըմպել Կյանքի աղբյուրից, թող այստեղ մաքուր եւ անարատ մնա աղտեղի ցանկություններից:

Ս. Առաքյալների և մեր առաջին լուսավորիչներ Թադեոսի և Բարդուղիմեոսի հիշատակության օր

Ս. Թադեոսը և Ս. Բարդուղիմեոսը Քրիստոսի անխոնջ 12 առաքյալներից էին, որոնք գալով Հայաստան՝ քրիստոնեություն քարոզեցին հայ ժողովրդին՝ արժանանալով «առաջին լուսավորիչներ» կոչմանը: Դեռևս քրիստոնեության արշալույսին, նրանք նահատակվեցին Հայաստանում: Առաքյալների գործունեության արդյունքում 301 թվականին հայ ժողովուրդն աշխարհում առաջինը քրիստոնեությունը հռչակեց իբրև պետական կրոն: Հիրավի, այս սրբազան առաքյալների դերը կարևորվում է երկհազարամյա քրիստոնյա հայ ժողովրդի կյանքում, որն հավատով և ջերմեռանդ սիրով լի է դեպի մայր եկեղեցին:

Ամեն տարի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում մատուցվում է Սուրբ և անմահ Պատարագ՝ ի հիշատակ Ս. Առաքյալների:

Commemoration of the Apostles St. Thaddeus and St. Bartholomew, the first preachers of Christianity in Armenia

Apostles St. Thaddeus and St. Bartholomew were two of the twelve Apostles of Christ, who came to Armenia and preached Christianity in Armenia deserving the title “the first illuminators”. Still at the dawn of Christianity they were martyred in Armenia. It was the result of their preaching and martyrdom that the Armenian people, being the first nation in the world, proclaimed Christianity as the state religion. Indeed, Apostles St. Thaddeus and St. Bartholomew played an important role in the history of 2000-year-old Christian Armenian nation which has unshaken faith and keen love towards its Mother Church.

Each year a Divine Liturgy is celebrated in the Cathedral of the Mother See of Holy Etchmiadzin in the memory of St. Apostles.



4: Հոգեհանգիստ - Memorial Service

A memorial service at St Yeghiche Armenian Church is requested:

- By Alpha, wife Lillian and brother Omega Martinian for the soul of their Mother who was also a loving Grandmother and Great Grandmother the late **HRIPSIME ATCHER MARTINIAN** on the 1st anniversary of her passing, and for all the old and new deceased members of **MARTINIAN** family.
- By Keghvard and Vahe Vartanian and family, Lena Vartoukian and family, Dickran Bohdjalian and family for the soul of their Wife, Mother and Sister **CECILE VARTANIAN (Սէսիլ Վարդանեան)** on the anniversary of her passing, and for all the old and new deceased members of the **VARTANIAN** family.
- By Krikor and Ani Vartoukian nee Chakmakdjian and their families for the soul of her Sister and their Aunt **MARO NAHIGIAN** on the 40th day memorial of her passing, and for all the old and new deceased members of the **NAHIGIAN, CHAKMAKDJIAN** and **VARTOUKIAN** families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

St Yeghiche Armenian Church is looking for people of all ages to be altar servers and choir members. If you would like to be in the choir and be uplifted by singing our beautiful "Sharagans" (hymns) just come to church on any Sunday.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to arrange a standing order/make a donation £to the St Yeghiche Arm. Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....